World Vision
ՀԱՅԱՍՏԱՆ

2018

**Վորլդ Վիժնը միջազգային երեխայակենտրոն և համայնքահեն կազմակերպություն է, որն աշխատում է երեխաների, նրանց ընտանիքների և համայնքների հետ՝ նպատակ ունենալով վերացնել աղքատությունն ու անարդարությունը:**

Վորլդ Վիժնը ներկա է Հայաստանի ավելի քան **200** համայնքներում՝ իրականացնելով **14** տարածքային զարգացման ծրագրեր Հայաստանի **6** մարզերում և մայրաքաղաք Երևանում: Վորլդ Վիժնն աշխատանքներ է իրականացնում Ամասիայում, Գյումրիում, Ստեփանավանում, Ալավերդիում, Վարդենիսում, Գավառում, Ճամբարակում, Իջևանում, Նոյեմբերյանում, Կապանում, Սիսիանում, Թալինում, Ապարանում և Երևանում:
Վորլդ Վիժն Հայաստանն իրականացնում է նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրեր, որոնք զգալիորեն մեծացնում են կազմակերպության աշխարհագրությունը:

**ԱՐԴՅՈՒՆՔ:** 2018թ-ին Հայաստանում ապրող 128 265 երեխա օգտվել է Վորլդ Վիժնի ծրագրերից. նրանցից **35 000-ը ներառված են Վորլդ Վիժնի «Երեխաների հովանավորության» ծրագրում:**

## ՎԱՂ ՄԱՆԿԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ

**Վորլդ Վիժն Հայաստանի ծրագրերն, ուղղված վաղ մանկական տարիքի երեխաների զարգացմանը, նպատակ ունեն խթանել մինչև 5 տարեկան երեխաների առողջ աճն ու զարգացումը:**

- Վորլդ Վիժնը սերտորեն աշխատել է **880** բուժաշխատողի և նախակրթարանների **545** աշխատակցի հետ, որպեսզի բարելավվի համայնքներում տրամադրվող այս ծառայությունների որակը:
- Ութ նոր ֆիլմեր՝ առողջ հղիության, մայրության, երեխաների առողջության, խնամքի և զարգացման վերաբերյալ, պատրաստվել են և տարածվել:
- Ծնողական/մայրության **80** դպրոցներում **8300** ծնող դասընթացների, քննարկումների և բուժաշխատողների կողմից տրամադրվող շարունակական խորհրդատվության միջոցով սովորում են, թե ինչպես լավագույնս հոգ տանեն իրենց երեխաների մասին:
- Վորլդ Վիժնի մասնագետները **30** ընտանեկան բժշկի և **113** բուժքույրի ներկայացրել են, թե ինչ է հետծննդաբերական դեպրեսիան, և ինչպես պետք է այն ախտորոշել ու վերահսկել:

**ԱՐԴՅՈՒՆՔ:** Վորլդ Վիժն Հայաստանի ծրագրային համայնքերում ապրող և հետծննդաբերական շրջանում գտնվող կանանց **78** տոկոսն անցել է հետծննդաբերական դեպրեսիայի սքրինինգ: Կանանց **2.7** տոկոսի մոտ հայտնաբերվել են սուր դեպրեսիայի նշաններ: Այս կանայք ուղեգրվել են ստանալու նեղ մասնագետների խորհրդատվություն:

# ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**Վորլդ Վիժն Հայաստանը ձգտում է հզորացնել երեխաներին, ընտանիքներին, համայնքներին և գործընկերներին՝ արձագանքելու և կանխարգելելու երեխաների՝ հատկապես ամենախոցելիների նկատմամբ չարաշահման, անտեսման և բռնության ցանկացած դրսևորում:**

- Տարվա ընթացքում **21417** երեխա ակտիվորեն մասնակցել է ծրագրի նախաձեռնություններին:
- Ավելացել է այն ծնողների թիվը, որոնք կիրառում են ոչ բռնի դաստիարակչական մեթոդներ. ծրագրային համայնքներում ապրող ծնողների շրջանում **10** տոկոսով նվազել է հոգեբանական և ֆիզիկական պատիժ կիրառող ծնողների թիվը:

**ԱՐԴՅՈՒՆՔ:** Վորլդ Վիժնի կողմից մշտապես աջակցություն ստացող առավել խոցելի (1050) ընտանիքների 59 տոկոսի կյանքում արձանագրվել է դրական տեղաշարժ՝ բարելավվել են բնակարանային պայմանները, ծնողներն ապահովում են երեխաների առողջ սնունդը և հոգ են տանում երեխաների կրթության և առողջության մասին:

## «ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ»

**«Հոգատարություն հանուն հավասարության» ծրագրի նպատակն է կանխել և փոխել կանանց և աղջիկներին վնասող կարծրատիպային վերաբերմունքն ու վարքագիծը, նպաստել այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ աղջիկներն ու տղաները ծնվում և արժևորվում են հավասարապես:**

- Ծրագրի արդյունքում նվազել է խտրական վերաբերմունքը՝ ծրագրի մասնակիցների շրջանում այն **25** տոկոսով պակաս է:
- Ծրագրի արդյունքում նվազել է անտարբերությունը բռնությանն ականատես լինելու դեպքում՝ ծրագրի մասնակիցների շրջանում այն **12** տոկոսով պակաս է:
- Ծրագրին մասնակցած զույգերի **15** տոկոսի հարաբերություններում արձանագրվել է դրական տեղաշարժ:

**ԱՐԴՅՈՒՆՔ:** Վորլդ Վիժնի ծրագրային համայնքներում ապրող մինչև **1** տարեկան երեխաների շրջանում աղջիկ-տղա հարաբերակցությունը դրականորեն փոխվել է՝ **121** տղա **100** աղջկա դիմաց հարաբերակցությունն այժմ դարձել է **106** տղա **100** աղջկա դիմաց: Գեղարքունիքի մարզում այս հարաբերակցությունը նախկինում եղել է **123** տղա/**100** աղջկա դիմաց:

## ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ

**Վորլդ Վիժնը ձգտում է կերտել այնպիսի միջավայր և արդյունավետ հարթակներ, որտեղ երիտասարդները կարող են կյանքի կոչել իրենց ծրագրերը, երազանքներն ու հույսերը, ինչպես նաև խոսել իրենց մտավախությունների մասին, որոնք վերաբերում են իրենց զարգացմանն ու ընդհանուր բարեկեցությանը:**

- **80** երիտասարդական IMPACT և SKYE ակումբներում ներգրավված են **1500** երիտասարդ և պատանի, որոնք նոր գիտելիքներ են ձեռքբերում և աջակցում են իրենց համայնքներին:
- **25** նոր սոցիալական ձեռնարկատիրություն է հիմնվել համայնքների երիտասարդների կողմից, իսկ **250** երիտասարդ մասնակցել է ձեռնարկատիրական դասընթացների:
- **40** ինժեներական լաբորատորիաներում ներկայումս ներգրավված են Հայաստանի հեռավոր համայքներում ապրող 1000 պատանի:
- **500** երեխա մասնակցել է մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ դասընթացի, որպեսզի կարողանա շուկայում պահանջված մասնագիտություն ընտրել:

**ԱՐԴՅՈՒՆՔ: 150** երիտասարդ մասնագետ սկսել է կայուն եկամուտ ստանալ մասնագիտական դասընթացներին մասնակցելուց և նոր պահանջված մասնագիտություն ձեռք բերելուց հետո:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

# «ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ՝ ՍԵՅ ԵՍ. ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐ

**Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ծրագրի նպատակն է նպաստել սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդ տղամարդկանց և կանանց համար աշխատանքի հնարավորությունների և եկամտի աղբյուրների ստեղծմանը Հայաստանում և Վրաստանում:**

- Ստեղծվել է նորարարական մասնագիտական կրթության անվճար առցանց հարթակ հայերեն լեզվով հայ երիտասարդների համար:
- Մշակվել է աշխատանքի վրա հիմնված միջին մասնագիտական գյուղատնտեսական դասընթացների **4** ծրագիր, միևնույն ժամանակ ուսումնական հաստատություններում ներմուծվել է գործնական խորհրդատվություն, իսկ կրթական հաստատությունները համալրվել են անհրաժեշտ սարքավորումներով:
- **100** երիտասարդի համար անցկացվել են դասընթացներ ձեռնարկատիրության վերաբերյալ, հինգ լավագույն բիզնես գաղափարները ստացել են ֆինանսավորում:
- Յոթ SKYE ակումբներում ներգրավվել են մոտ **150** երիտասարդ:

# ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ






Տվյալ տարածաշրջանում Վորլդ Վիժն Հայաստանի ծրագրերից օգտվող երեխաների թիվը:

**Վորլդ Վիժնի նպատակն է հզորացնել արտադրողներին, որպեսզի վերջիններս ունենան եկամտի կայուն աճ և շահույթ բիզնես գործունեությունից, ինչը կընդլայնի նրանց՝ երեխաների բարեկեցությունն ապահովելու հնարավորությունները:**

- Հայաստանի **70** համայնքում հիմնված արտադրողների **73** խմբերում ներգրավված է **762** անդամ:
- Արտադրողների **73** խմբերից **20**-ում անդամները դարձել են օրինականորեն գրանցված արտադրողական խմբեր կամ կոոպերատիվներ, որոնք այսուհետ իրավասու են դիմել դրամաշնորհների և դոնորների կողմից տրամադրվող այլ աջակցության:
- Այսօր ծրագրի շահառուներն ունեն **55** գնորդներից և մատակարարներից բաղկացած ցանց:
- **70** դասընթաց և այցելություն է կազմակերպվել **645** արտադրողի համար՝ նրանց հմտությունները բարելավելու նպատակով:

**ԱՐԴՅՈՒՆՔ:** Արտադրողների մոտ **70** տոկոսը կարողանում է լավագույնս հոգ տանել իրենց երեխաների մասին, ինքնուրույն ապահովել դպրոցի համար անհրաժեշտ պարագաները, երեխաների հագուստն ու առողջ սնունդը: Արտադրողներն առանց արտաքին միջամտության ինքնուրույն վարում են իրենց բիզնեսը, ունեն իրենց կայուն եկամուտը, և կախված չեն պետական կամ որևէ արտաքին աջակցությունից:

**2018-ին Վորլդ Վիժնը սկսեց «ԵՄ-ը զբոսաշրջության համար. համայնքահեն գյուղական զբոսաշրջություն և մշակութային միջոցառումներ Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում» երկամյա ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Ծրագիրն իրականացվում է Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հետ համատեղ:**

- Ճամբարակում կազմակերպվել է «Ձմեռային հեքիաթ» փառատոնը, իսկ ահա Վայոց ձորի Վարդահովիտ համայնքում կազմակերպվել է «Արևորդի» բնապահպանական **8**-րդ փառատոնը, որտեղ **40** տեղական արտադրող և ձեռնարկատեր հնարավորություն են ունեցել ցուցադրել և վաճառել իրենց արտադրանքը:
- Նոր արշավական արահետը կապում է Ճամբարակի **15** գյուղ և Վայոց ձորի **5** գյուղը:
- Զբոսաշրջությամբ զբաղվող **108** անհատի և տեղական բիզնեսի համար կազմակերպվել են վերապատրաստումներ:
- Ճամբարակում հիմնվել է Զբոսաշրջության տեղեկատվական կենտրոն:

## ԶԱՐԳԱՑՆԵԼՈՎ ՏՈՒՐԻԶՄԸ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ

It takes a world
to end violence against children

**«Բռնությունը փոխարինենք սիրով» երեխաների հանդեպ բռնության դեմ պայքարի հանրային արշավը մեկնարկել է 2017 թ.-ին: Հանրային արշավի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում երեխայի հանդեպ բռնության կանխարգելմանը, վերացմանը և բռնության ենթարկված երեխայի համակողմանի վերականգնմանը:**

- Երեխաների պաշտպանության միջազգային օրը գործընկեր կազմակերպությունները տարածեցին տեղեկատվական թերթիկներ հալածանքի և դրա դեմ պայքարելու միջոցների վերաբերյալ: Նաև կազմակերպվեց ինքնատիպ համերգ, որի նպատակն էր կրթել պատանի ունկնդիրներին իրենց իրավունքների վերաբերյալ:
- 472 ծնող և 133 մանկավարժ Հայաստանի 200 համայնքից մասնակցել է դրական ծնողավարության և դաստիրակության վերաբերյալ դասընթացների:
- Ստանալով ֆինանսավորումը INSPIRE Fund–ից արշավի գործընկերները պետք է ադապտացնեն, թարգմանեն և շրջանառեն INSPIRE–ի ռազմավարությունները՝ որպես աջակից գործիք Հայաստանի կառավարությանը՝ երեխաների հանդեպ բռնության կանխարգելման և արձագանքման գործում:

## ՀԱՄԱԽՄԲԵԼՈՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ՝ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

# «ՀԱՍԱՆԵԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳԻՐ

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

**2018թ.-ին Վորլդ Վիժն Հայաստանը սկսեց իրականացնել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Հասանելի համայքնային սոցիալական ծառայություններ» եռամյա ծրագիրը, որի նպատակն է աջակցել համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացմանը և բարելավել առավել խոցելի երեխաների և նրանց ընտանիքների կյանքը Հայաստանի տասը մարզերում (60 համայնքում) և Երևանում:**

- Համայնքային սոցիալական աշխատողների համար մշակվել են աշխատանքի նկարագիր, բառարան, մեթոդաբանություն և աշխատանքային ուղեցույց:
- Երևանի պետական համալսարանում մշակված առցանց դասընթացին մասնակցել է 19 սոցիալական աշխատողներ:
- Աշխատանքի է ընդունվել 73 համայնքային սոցիալական աշխատող:
- 159 անհատական զարգացման պլան է մշակվել, և 1685 տնային տնտեսություն ստացել է սոցիալական աջակցություն համայնքային սոցիալական աշխատողների միջոցով:

Հայաստանում ծայրահեղ աղքատ ընտանիքներում ապրող երեխաների **13%-ը** չունի դպրոցական պարագաներ. ավելին՝ նրանց **45%-ը** չունի կոշիկ:

Ուղարկեք **77** թվերը **7733** կարճ համարին՝ օգնելով այս երեխաներին ունենալ՝

- Տաք հագուստ
- Դպրոցական անհրաժեշտ պարագաներ

*Մեկ SMS-ի արժեքը **500** դրամ է

# Շնորհակալ ենք

մեր նվիրատուներին, ովքեր հնարավոր են դարձնում մեր աշխատանքը



| | |
|---|---|
| 7,002,908 | Վորլդ Վիժն Միջազգային |
| 3,436,991 | Ապրանքաիրային նվիրատվություն |
| 434,367 | Պայմանագիր Համաշխարհային բանկի հետ |
| 233,855 | ԱՄՆ Պետքարտուղարության Բնակչության, փախստականների և միգրացիայի գրասենյակի դրամաշնորհ |
| 158,709 | Կորպորատիվ նվիրատվություններ |
| 145,938 | Եվրոպական միության դրամաշնորհներ |
| 32,948 | Անհատական նվիրատվություններ |
| 14,870 | ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության դրամաշնորհ |

**2018թ.-ի ընդհանուր բյուջեն՝ 11 460 586**

donate•am